ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում փորձագետ ներգրավելու մասին

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության օդային տրանսպորտի քաղաքականության բաժնի փորձագետ

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

1. Օդային տրանսպորտի ոլորտին վերաբերող նորմատիվ իրավական, տեխնիկական և գերատեսչական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցություն.

2. Միջազգային համաձայնագրերով սահմանված օդային տրանսպորտի ոլորտին առնչվող հանձնառությունների կատարման աշխատանքներին մասնակցություն.

3. օդային տրանսպորտի քաղաքականության ձևավորման և զարգացման աշխատանքներին մասնակցություն, առաջարկների ներկայացում:

Փորձագետ ներգրավելու ժամկետը՝ մինչև մեկ տարի ժամկետով:

Փորձագետի պարտականությունները՝

1. <<Ավիացիայի մասին>> օրենքի և օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի և գերատեսչական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցություն.
2. <<Ընդհանուր ավիացիոն գոտու մասին>> համաձայնագրով ներկայացված ԵՄ օրենսդրության իրավական ակտերի՝ ՀՀ օրենսդրության մեջ տեղայնացման աշխատանքներին մասնակցություն.
3. Միջազգային համաձայնագրերով սահմանված օդային տրանսպորտի ոլորտին առնչվող հանձնառությունների կատարման աշխատանքներին մասնակցություն.
4. օդային տրանսպորտի քաղաքականության ձևավորման և զարգացման աշխատանքներին մասնակցություն, առաջարկների ներկայացում:

Փորձագետին ներկայացվող պահանջները՝

1) բարձրագույն կրթություն.

2) Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ օդային տրանսպորտի կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության կամ իրավունքի կամ ճարտարագիտության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ.

3) ոլորտը կարգավորող օրենսդրության և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

4) համակարգչով և ժամանակակից այլ միջոցներով աշխատելու ունակություն.

5) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

6) ռուսերեն և անգլերեն լեզուների բավարար տիրապետում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ **01.07.2025թ**.

Ընտրություն կատարելու եղանակն է՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն:

Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 010-511-355, 010-511-316:

Չի թույլատրվում հավակնորդի հետ պայմանագիր կնքել, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում Նախարարության գլխավոր քարտուղարի անունով (դիմումը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- հայտարարություն ՀՀ կառավարության 02.08.2018թ. N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (հայտարարությունը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ (ներ)),
- տվյալ աշխատանքին անցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ վկայականի /ների/,

աշխատանքային փորձի մասին վկայող փաստաթղթի (հրաման, տեղեկանք, հավաստագիր) պատճենները բնօրինակների հետ միասին,

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
- Համառոտ CV:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, 14:30-ից մինչև 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: Էլեկտրոնային հասցե՝ n.kirakosyan@mta.gov.am :